hաշ. վճ.

**Հավելված 6**
**«ԳՀԾՁԲ-2018/8-ԵՊԲՀ» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**«ԵՊԲՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ԳՀԾՁԲ-2018/8-ԵՊԲՀ»**

ք. Երևան «06» 04 2018 թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»** հիմնադրամը, ի դեմս **ռեկտոր Ա.Ա.Մուրադյան-ի,** որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Հզզարաշեն» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Գուրգեն Հակոբյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բիոքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ ծառայությունների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը[1]:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

---

[1] *Սույն պայմանագրի նախագծի 2.4.4 կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները:*

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի՛ մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***1495000 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ***:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայությունը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին[2]:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

---

[2] *Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:*

կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև *30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:*

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, *պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման* կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ** | **«Հազարաշեն» ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **Հասցե՝ ք.Երևան,Կոմիտաս 54 Վ** |
| **Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/6** | **Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ** |
| **Հ/Հ 11500166513800** | **Հ/Հ 2470103171510000** |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ 01816381** |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **Տնօրեն՝ Գուրգեն Հակոբյան** |
| ______________ **(ստորագրություն)** **Կ.Տ** | ______________ **/ստորագրություն/** **Կ.Տ** |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել << օրենսդրությանը չհակասող դրույթներ.*

*Հավելված N 1*
*«06» «04» 2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| **1** | **71241200** | **Ըստ հավելված 1.1-ի** | **դրամ** | **1495000** | **1** | **ք Երևան Կորյունի 2** | **Պայմանագրի ստորագրման օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում** |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Հազարաշեն» ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան,Կոմիտաս 54 Վ**
**Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 2470103171510000**
**ՀՎՀՀ 01816381**
**Տնօրեն՝ Գուրգեն Հակոբյան**

/ստորագրություն/
Կ.Տ

<u>Հավելված N 1.1-Տեխնիկական բնութագիր</u>

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԻՈՔԻՄԻԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

<u>Ընդհանուր նկարագրություն</u>

| | | |
|---|---|---|
| 1 | Շինարարության նկարագիրը | Բիոքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգում ք Երևան Կորյունի 2 |
| 2 | Հիմնանորոգման աշխատանքների մակերեսը | շուրջ 1650 ք/մ |
| 3 | Բարեկարգվող հողամասի մակերեսը | - |
| 4 | Անհրաժեշտ սենյակների կազմը | Համաձայն կից ներկայացված հավելվածի |

<u>Նախագծման ելակետային տվյալներ</u>

1. Անշարժ գույքի սեփականության վկայական
2. Նախագծման տեխնիկական առաջադրանք
3. Նախատեսվող սենյակների կազմը համաձայն <u>Հավելվածի</u>

<u>Նախագծման առաջադրանք</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ-ի բիոքիմիական մասնաշենքը հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան և ընգրկված է ՀՀ կառավարության կողմից սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում՝ **89.1 կետ, որպես գլխավոր մասնաշենք**: Շենքը նախագծվել է ճարտարապետ Սամվել Սաֆարյանի կողմից և կառուցվել է 1938-1950թթ. ընկած ժամանակահատվածում: Քանի որ շինությունը ընգրկված է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում, ուստի նախագիծը հարկավոր է մշակել համաձայն **29,դեկտեմբեր,2005թ. թիվ 2338-Ն** կառավարության որոշման (Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և **<u>փոփոխման</u>** կարգ):

Սենքերի ներկա տեղաբաշխվածությունը նախագծվող մասում ըստ հարկաբաժինների

Առաջին հարկ

- Գլխավոր մուտք և ֆոյե
- 1 լսարան
- 2 աշխատասենյակ
- 2 խումբ ս/հ-ներ
- Բուֆետ-ճաշարանի
- Միջանցք

Երկրորդ հարկ

- ԵՊԲՀ բոլեջի դեկանատ
- 1 լսարան
- 3 աշխատասենյակ
- 1 ս/հ խումբ
- 1 ինժեներական սենյակ
- Միջանցք

Երրորդ հարկ

- Մեծ լսարան
- 3 շխատասենյակ
- Արխիվ
- Տնտեսական պարագաների սենք
- 2 խումբ ս/հ-ներ
- Միջանցք

Չորրորդ հարկ

- 3 լսարան
- 3 աշխատասենյակ
- 1 խումբ ս/հ-ներ
- Պահեստ
- Միջանցք

Հինգերորդ հարկ

- Մեծ լսարան
- 1 լսարան
- 1 դասասենյակ

Կառուցման համար նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները, որոնք նախապես հարկավոր է ներառել դիմումին կից ներկայացվող **Նախագծման առաջադրանքում** և դրական եզրակացությունից հետո ծեռնամուխ լինել դրանց նախագծմանը.

- Իրականացնել նախագծվող հատվածի մանրամասն չափագրություն, քանդման աշխատանքների մանրամասն գծագրեր, հիմնանորոգվող հարկաբաժինների, ճարտարապետա-շինարարական, կոնստրուկտորական, անհրաժեշտության դեպքում ուժեղացման, ինչպես նաև ինժեներական ներքին ցանցերի մոնտաժման գծագրերի մշակում՝ (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում, օդափոխություն և օդորակում, թույլ լարման ցանցեր՝ ըստ ցանկի, արտաքին ինժեներական գծերի նորացում կամ փոխարինում (ըստ անհրաժեշտության), իրականացնել հիմնական սենքերի եռաչափ մոդելավորում գունային և հարդարման նյութերի առկայությամբ:

- Իրականացնել շենքի տեխնիկական վիճակի սեյսմիկ ուսումնասիրություն և ներկայացնել եզրակացությունը
- **Անհրաժեշտության դեպքում իրականացնել սեյսմազինվածության բարձրացման կամ մասնակի ուժեղացման նախագիծ՝ համաձայն սեյսմիկ եզրակացության**
- **Չափագրման մանրամասն գծագրեր և քանդվող նյութերի մասնագրեր**
- **Շենքի կոնստրուկտորական գծագրեր**
- **Ճարտարապետաշինարարական մաս**
- **Շինարարության կազմակերպման նախագիծ**
- **Գլխավոր հատակագիծ՝ կից ճարտարապետաշինարարական մասին**
- **Ինժեներական մաս՝**
  - ➢ ներքին ջրամատակարարման, հրդեհաշիջման և ջրահեռացման ցանցերի, ներքին էլեկտրամատակարարման ցանցի և ջեռուցման համակարգի փոխարինում
  - ➢ Նոր հակահրդեհային ահազանգման ցանցի իրականացում
  - ➢ Նոր հեռախոսային և համակարգչային ցանցերի իրականացում, լսարաններում հեռահաղորդակցության հնարավորությամբ՝ համակարգչային ցանցը կցել գոյություն ունեցող ցանցին
  - ➢ Նոր տեսահսկման համակարգի իրականացում

➢ Լսարաններում նախատեսել բազմակի օգտագործման պլաստիկ գրատախտակներ

➢ Նախատեսել բոլոր սենքերում օդորակում և օդափոխություն բոլոր լսարաններում՝ ներածման և արտածման համակարգերի միջոցով

➢ Անհրաժեշտության դեպքում արտաքին ինժեներական ցանցերի փոխարինում և/կամ նորոգում

- <u>**Այլ պահանջներ տարբեր լուծումներին և նյութերին**</u>

- Նախատեսել բոլոր պատուհանների և պատուհանագոգերի փոխարինում՝ նյութը համաձայնեցնել Պատվիրատուի հետ, ձևը թողնելով անփոփոխ
- Նախատեսել շենքի հիմնանորոգվող հատվածի արտաքին հարդարման աշխատանքներ՝ հիմնականում ետնամասի սվաղի փոխարինում և վերջնամշակում (ծավալը և նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ)
- Ապահովել սակավաշարժ հաշմանդամ խմբերի տեղաշարժը առաջին հարկում և ուղղահայաց ուղղությամբ՝ վերելակի միջոցով
- Սակավաշարժ հաշմանդամ խմբերի համար նախատեսել ս/հ
- Գլխավոր մուտքից դեպի աջ և ձախ տեղակայված աստիճանավանդակներում նախագծել առնվազն 8 հոգու համար նախատեսված վերելակներ (ցանկալի է առանց մեքենայական սենքի), որը կապահովի մարդկանց ուղղահայաց տեղափոխությունը (նախագծի տվյալ մասը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ): Վերելակները պետք է բարձրնան մինչև 5-րդ հարկ և դրա հետ կապված անհրաժեշտ նախագծային լուծումները և կոնստրուկտիվ փոփոխությունները պետք է ներառվեն տվյալ ՆՆփ-ում:
- Մեծ լսարաններում նախատեսել թեք նստատեղերի կոնստրուկցիաների փոխարինում նոր մետաղական կոնստրուկցիաներով
- Մեծ լսարանները կահավորել ակուստիկ պանելներով՝ ապահովելու համար ձայնամեկուսացումը և ներսում ձայնի բալանսավորված ռեզոնանսը
- Նախատեսել սանիտարական պարագաներ, ցուցանակներ և շերտավարագույրներ
- Նախատեսել PVC ֆոլգայապատ կախովի առաստաղներ <<Արմսթրոնգ>> տիպի
- Լուսատուները նախատեսել LED տիպի՝ նվազագույնը 48.000 ժամ անխափան աշխատանքի բնութագրին համապատասխան

- Նախատեսել միջանցքներում և սենյակներում պրեսգրանիտե հատակներ, իսկ ս/հ-ներում ու թաց կետերում՝ խեցեսալե
- Առաջին հարկի ֆոյեյի հատակը և պատերը նախատեսել հղկում և մշակում
- Դռները սենյակներում նախատեսել ՄԴՖ կամ ալյումինե և միջանցքներում ալյումինե, իսկ գլխավոր մուտքի 3 զույգ դռները նախատեսել բարձրորակ կաղնե փայտից
- Աստիճանավանդակներում նախատեսել ալյումինե փոշեներկված կամ մետաղական դեկորատիվ բռնաձողեր
- Աստիճանաքայլերը և աստիճանահարթակները նախատեսել գրանիտե կամ համարժեք քարերով երեսապատում
- Պատերը հարդարել հիմնականում լատեքսային ներկերով և թաց կետերում հախճասալիկներով
- Նախատեսել պատերի պաշտպանիչ լամինատե կամ ՄԴՖ բազրիքներ համաձայն կահավորման գծագրերի
- Ուժեղացման աշխատանքները նախատեսել համաձայն Սեյսմիկ եզրակացության և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի
- Նախատեսել թեքահարթակներ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը ապահովելու համար
-

**Նախագծի կազմը**

- ✓ շենքի տեխնիկական վիճակի մասին սեյսմիկ եզրակացություն, բացատրագրեր, մասնագրեր, հատակագծեր, կտրվածքներ, պրոֆիլներ, հանգույցներ, կահավորման մանրամասն գծագրեր ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ, այդ թվում ծավալաթերթի տեսքով նախահաշիվ և աշխատանքների իրականացման ժամանակացույց և շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ
- ✓ նախագիծը և նախահաշիվը ներկայացնել՝ անցած համապատասխան քաղաքաշինական անկախ փորձաքննություն (փորձաքննության տեսակը կսահմանի Երևանիք աղաքապետարանի կամ ՀՀ մշակույթի նախարարության կողմից)
- ✓ նախագիծը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ հակահրդեհային պետական տեսչության հետ
- ✓ վերելակների նախագիծը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ

✓ նախագիծը համաձայնեցնել ՀՀ մշակույթի նախարարության հետ

✓ նախագիծը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի հետ

✓ նախագիծը համաձայնեցնել բոլոր շահագրգիռ մարմինների և կառույցների հետ

✓ նախագիծը իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև հասարակական ու կրթական նշանակության շենքերի նախագծման դրույթներին համապատասխան

Այլ պահանջներ

1. Նախագիծը ներկայացնել վեց օրինակից թղթային և էլեկտրոնային PDF ու CAD կամ AutoDesk ֆորմատային տարբերակներով:
2. Նախահաշիվը ներկայացնել 2 թղթային օրինակից և միաժամանակ ծավալաթերթ էլեկտրոնային, էքսել տարբերակով:
3. Ներկայացնել շինարարական աշխատանքներին, նյութերին և սարքավորումներին ներկայացվող երաշխիքային ժամկետների պահանջները
4. Ներկայացնել շինարարական մրցույթի անհաժեշտ որակավորման չափանիշները
   - Լիցենզիա
   - Աշխատուժ
   - Մեք. մեխանիզմ
5. Նախագիծը պետք է համապատասխանի ՀՀ շինարարական նորմերին
6. Նախագծման առաջադրանքին պետք է կցվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը
7. Նախահաշիվը կազմել այնպես, որ յուրաքանչյուր մեծ և փոքր լսարանի համալիր աշխատանքները և վերելակներից յուրաքանչյուրի տեղադրումը արտացոլված լինեն առանձնացված, իսկ նախագիծը այնպես, որ աշխատանքները հնարավոր լինի իրականացնել առանձնացված սկզբունքով:

Հավելված

# «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-Ի ԲԻՈՔԻՄԻԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Հ/Հ | ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ՍԵՆՅԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԻ |
|---|---|---|---|
| | **Առաջին հարկ** | | |
| 1. | Գլխավոր մուտք՝ ֆոյե | 1 սենք | Շուրջ 125 քմ և 3 տամբուրներ |
| 2. | Լսարան | 1 սենք | Շուրջ 21 քմ լսարան-դասասենյակ |
| 3. | Աշխատասենյակ | 2 սենք | 1 սենքը՝ շուրջ 21 քմ<br>1 սենք՝ շուրջ 23.5 քմ |
| 4. | Ճաշարան | 3 սենք | 1 սենք՝ սննդի պատրաստման<br>1 սենք՝ ճաշատեղի<br>1 սենք՝ հանդերձարան<br>**Ընդամենը՝ շուրջ 90 քմ** |
| 5. | Սանհանգույցներ | 2 խումբ | Նախատեսել նաև հաշմանդամների համար հարմարեցված ս/հ |
| | **Երկրորդ հարկ** | | |
| 6. | ԵՊԲՀ քոլեջի դեկանատ | 1 սենք | Շուրջ 21 քմ |
| 7. | Լսարան | 1 սենք | Շուրջ 21 քմ |
| 8. | Աշխատասենյակ | 3 սենք | 1 սենքը՝ շուրջ 24 քմ<br>1 սենք՝ շուրջ 30 քմ<br>1 սենք՝ շուրջ 16 քմ |
| 9. | Ինժեներական սենյակ | 1 սենք | Շուրջ 19 քմ |
| 10. | Սանհանգույցներ | 1 խումբ | |
| 11. | Միջանցք | - | |

| | | | |
|---|---|---|---|
| | **Երրորդ հարկ** | | |
| 12. | Մեծ լսարան | 1 սենք | Շուրջ 129 քմ |

| | | | |
|---|---|---|---|
| 13. | Աշխատասենյակ | 2 սենք | Շուրջ 21 քմ յուրաքանչյուրը |
| 14. | Լսարան | 1 սենք | Շուրջ 80 քմ |
| 15. | Սանհանգույցներ | 2 խումբ | |
| 16. | Միջանցք | | |
| | **Չորրորդ հարկ** | | |
| 17. | Աշխատասենյակ | 2 սենք | 1 սենքը՝ շուրջ 21 քմ<br>1 սենք՝ շուրջ 17 քմ |
| 18. | Լսարան | 3 սենք | 1 սենքը՝ շուրջ 21 քմ<br>1 սենք՝ շուրջ 22 քմ<br>1 սենք՝ շուրջ 42 քմ<br>Կամ 2 լսարան<br>1 սենք շուրջ 21 քմ<br>1 սենք շուրջ 74 քմ |
| 19. | Աշխատասենյակ | 3 սենք | 1 սենքը՝ շուրջ 24 քմ<br>1 սենք՝ շուրջ 30 քմ<br>1 սենք՝ շուրջ 16 քմ |
| 20. | Սանհանգույցներ | 2 խումբ | |
| 21. | Միջանցք | - | |
| | **Հինգերորդ հարկ** | | |
| 22. | Մեծ լսարան | 1 սենք | Շուրջ 128 քմ |
| 23. | Լսարան | 2 սենք | Յուրաքանչյուրը շուրջ 21 քմ |
| 24. | Միջանցք | - | |

| Ծառայության կատարման ժամկետի | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի ստորագրման պահից | 90 օրում:<br>Իր մեջ ներառում է աշխատանքային նախագծի մշակման գործընթացը, ընթացիկ և վերջնական համաձայնեցումները, ինչպես նաև ամփոփ ՆՆՓ փաստաթղթերի հանձնումը՝ անցած համապատասխան քաղաքաշինական փորձաքննություն |

- Նախագծող կազմակերպությունը պետք է ունենա հետևյալ լիցենզիաները՝
  - Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)՝ հետևյալ ներդիրներով՝

- Բնակելի, հասարակական և արտադրական

- Էներգետիկ
- Հիդրոտեխնիկական

- Նախագծող կազմակերպությունը բոլոր աշխատանքները պետք է իրականացնի սեփական միջոցներով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների և լիցենզավորված այլ կազմակերպությունների

- Նախագծման՝ աշխատանքների ամբողջ ընթացքում նախագծողը բոլոր քայլերը, լուծումները և նյութերը պետք է համաձայնեցնի նախագծող կազմակերպության հետ, սակայն որը չի հակասելու ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին

- Նախագծող կազմակերպությունը պետք է ունենա հասարակական շենքերի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների նախագծման փորձ՝ համանման տվյալ նկարագրին:

*Հավելված N 2*
*« 06 » « 04 » 2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200 | « Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բիոքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային ծառայություններ» | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1495000 | 1495000 | 1495000 | 1495000 | 1495000 | 1495000 | 1495000 | 1495000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Կ. Մուրադյան**

**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Հազարաշեն» ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան,Կոմիտաս 54 Վ**
**Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 2470103171510000**
**ՀՎՀՀ 01816381**
**Տնօրեն՝ Գուրգեն Հակոբյան**

**/ստորագրություն/**
**Կ.Տ**

*Հավելված 3*
*«    »  «    »   2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   .   » «               » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »     2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

*Սույնով արձանագրվում է, որ* ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                                      Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ________________-ին կնքված N __________________.
պայմանագրի կնքման ամսաթիվը                                             պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ________________<br>ազգանուն, անուն | ________________<br>ազգանուն, անուն |
| ________________<br>ստորագրություն | ________________<br>ստորագրություն |

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| <<Հազարաշեն>> ՍՊԸ | <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ |
| ք. Երևանի, Կոմիտասի 54Վ, | ք.Երևան,Կորյունի2 |
| Հ/հ 2470103171510000 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| <<Արդշինբանկ>> ԲԲԸ | Հ/հ 11500166513800 |
| ՀՎՀՀ 01816381 | ՀՎՀՀ 01503448 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

06 օգոստոսի 2018թ.

Պայմանագրի անվանումը — <<Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում >> ծառայության գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվ — 06 ապրիլի 2018թ.

Պայմանագրի համարը՝ — ԳՀԾՁԲ-2018/8-ԵՊԲՀ

Պատվիրատուն՝ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական Բժշկական համալսարան>>հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Մուրադյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 06 օգոստոսի 2018թ. կազմած՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 1 եզրակացությունն այն մասին որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին , կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| Հ/հ | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը / հազ. դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի բիոքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքները | 1 | 1 | 06.04.2018-05.07.2018 | 06.04.2018-06.08.2018 | 1495.0 | սեպտեմբեր 2018թ. |

Աշխատանքները հանձնեց

Գ. Հակոբյան

Աշխատանքները ընդունեց

Ա.Մուրադյան

# ԱԿՏ N 1

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադամը (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 06.04.2018թ. կնքված ԳՀԾՁԲ-2018/8 ԵՊԲՀ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 06 օգոստոսի 2018թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Չափի միավորը | քանակը (փաստացի) |
| <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի բիոքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքները | ՀՀ ԴՐԱՄ | 1 495 000 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

Գ. Հակոբյան

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Ա.Մուրադյան

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 10 | Սեպտեմբեր | 2018 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 6 | Օգոստոս | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 3568976728 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 6 Ապրիլ, 2018 թ. | ԳՀԾՁԲ-2018/8-ԵՊԲՀ |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 8 1 6 3 8 1 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՀԱՋԱՐԱՇԷՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | <<Արդշինբանկ>> ՓԲԸ — N 2470103171510000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՄԻՏԱՍ ՊՈՂ 54Վ -- |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [16] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [17] Բանկային տվյալները | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ — N 11500166513800 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային ծառայություններ | դրամ | 1 | 1495000 | | 1495000 |
| Ընդամենը | | | | | | 1495000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HAKOBYAN GURGEN 3402480042

(ստորագրություն, անուն, ազգանուն)

10/09/2018 15:09:18

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է «Հազարաշեն» ՍՊ ընկերությանը առ այն, որ «Երևանի Մխիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարան» հիմնադրամի պատվերով 2018թ-ին, հիմնադրամի և ընկերության միջև կնքված հիմնադրամի կարիքների համար 06.04.2018թ. կնքված №ԳՀԾՁԲ-2018/8-ԵՊԲՀ պայմանագրի շրջանակներում իրականացրել է «Երևանի Մխիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարան» հիմնադրամի բուժքիմիական մասնաշենքի կենտրոնական հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ՝ 1495.0 հազ. դրամ գումարով:

Ծառայությունները կատարվել են ողջ ծավալով, պատշաճ որակով և սահմանված ժամկետում: Սակայն քանի որ Երևանի քաղաքապետարանի կողմից դիտարկվող ժամկետում նախագծման թույլտվությունների տրամադրման գործընթացը կասեցված էր, հանձնման-ընդունման ակտը ստորագրվել է ուշացումով,՝ որի պատճառով պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը չի կիրառվել:

«Երևանի Մխիթար Հերացու Անվան

Պետական Բժշկական Համալսարան» Հիմնադրամի ռեկտոր

Ա. Մուրադյան